



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿՐ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ԹՐՈՑ ՔԱՂԱՔԻ  
ՀԱՅՈՑ Ս. ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ**

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ  
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔԸ ԱԶԳԻՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ  
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՒՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ  
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ  
ԷԶՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ ՍԻՐՈՅ ՈՂԶՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻԴՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ԹՐՈՑ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻԻՆ, ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳԻՆ,  
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԻՆՈՒԹԵԱՆ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲԻՆ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-  
ԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՑ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՄԵՐ  
ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱԻԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԳԻՆ

Աստուծոյ ողորմութեամբ և սուրբ Էջմիածնի օրհնութեամբ Միացեալ  
Նահանգաց Թրոյ քաղաքին մէջ՝ անցեալ դարու վերջերուն կազմակերպուած  
ձեր կրոնական համայնքը ունեցաւ իր սեփական առաջին փոքրիկ եկեղեցին  
1911-ին, օծուած 1916-ին ձեռամբ տ. Տիրայր և Տրիփոն վարդապետներու և  
ապա 1927-ին մեծ եկեղեցին՝ օծուած ձեռամբ տ. Տիրայր արքեպիսկոպոսի:

Թրոյի ամերիկեան հիւրընկալ հողի վրայ, հայ հաւատացեալները, տաւ-  
նամեակներ շարունակ, համախմբուած իրենց աղօթքի Տունին կամարներուն  
ներքև՝ ապրեցան ու աճեցան, իրենց հոգիներուն մէջ վառ պահելով նախ-  
նեաց լոյս հաւատքը, ասանդութիւնները և հայրենաքաղձ զգացումները:

Այժմ Մեզի համար մեծ ուրախութիւն է հաստատել որ դուք, այսօրուան  
ծխական խորհուրդդ և հոգևոր հովիտդ, ձեր անխնջ ջանքերով և հաւատաց-  
եալ ժողովուրդի առատաձեռն օժանդակութեամբ, յաջողեցաք ձեր համայնքը



օժտել նորակառույց շքեղ եկեղեցական շէնքով մը, որ յետ այսու իր սուրբ Սեղանէն երկնային լոյս, շնորհք և մխիթարութիւն պիտի բաշխէ ձեզի ամենուր:

Աստուածասէր համայնքիդ նորակառույց սուրբ Պետրոս եկեղեցույ հանդիսատր օժման առիթով, որ տեղի կ'ունենայ 19 սեպտեմբեր 1971-ին, Մենք՝ կաթողիկոս Ամենայն Հայոց, խոր հրճումանքով՝ հայրական սիրոյ Մեր ողջոյնը և օրհնութիւնը կ'ողորակենք տիրախնամ թեմիդ առաջնորդ գեր. տ. Թորգոմ արքեպիսկոպոսին, համայնքիդ բարեջան հոգևոր հովիւ տ. Կարէն քհն. Կտանեանին, ծխական խորհուրդի յարգարժան անդամներուն, ինչպէս և տիկնանց, երիտասարդաց միութեանց ու կիրակնօրեայ և հայ դպրոցներու խնամակալութեան և դպրաց դասու կրօնասէր անդամներուն, և համայն հաւատացեալ մեր ժողովուրդին, աղօթքով արտաբռնի որ Տէրը անասան և յաւէտ շէն ու պայծառ պահպանէ ձեր եկեղեցին և ձեր աստուածասէր համայնքը, Միացեալ Նահանգաց քրիստոսասէր ժողովուրդի ծոցին մէջ:

«Թագաւոր երկնատր զեկեղեցի Քո անշարժ պահեա, և երկրպագուս անուանդ Քոմ սրբոց պահեա ի խաղաղութեան»։ ամէն:

*Կապուտիկոս*

**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուա կոնդակս ի 16-ն յունիսի  
 1971 փրկչական ամի,  
 և ի տումարիս հայոց ՌՆԻ,  
 ի մայրավանս սրբոյ Էջմիածնի  
 ՀՄՐ. 707

